ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 968 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1671-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման կարգը սահմանելու մասին» N 1671-Ն որոշմամբ սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) պետի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի» բառերով.

2) 5-րդ կետում «սահմանված կարգով հանված կամ մարված» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված» բառերով.

3) 6-րդ կետում «ոստիկանության http://www.police.am» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության https://www.mia.gov.am» բառերով.

4) 16.1-ին և 16.2-րդ կետերում «ոստիկանությունը» և «Ոստիկանությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը» բառերով.

5) 22-րդ կետում «ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ